

մաղահովում է լարման ավտոմատիկ պահպանությունը միջին կարգավորվող արժեքի  $\pm 5\%$ -ի սահմաններում՝ նոմինալ տեղակայման, պտտման մասներում՝ նոմինալ տեղակայման, պտտման մասներում՝ նոմինալ արագության, պարապ ընթացքից մինչև նոմինալ մեծությունը բեռնավորման փոփոխության և 0,8-ից (ետ ընկնող) մինչև մեկ կարողության գործակցի յուրաքանչյուր արժեքի դեպքում:

Կայունացող հարմարանքը ապահովում է նաև լարման փոփոխության հնարավորությունը նոմինալի  $95-100\%$ -ի սահմաններում, բեռնավորման յուրաքանչյուր արժեքի դեպքում՝ պարապ ընթացքից մինչև նոմինալ մեծությունը, 0,8-ից (ետ ընկնող) մինչև մեկ կարողության գործակցի դեպքում և շրջապատող միշտավայրի  $+35^{\circ}\text{C}$ -ից մինչև  $0^{\circ}\text{C}$  ջերմաստիճաննում:

Տվյալ կոնստրուկցիան խիստ պարզացրած է

գրգռվել ունեցող գեներատորների համեմատությամբ, որովհետեւ նրա մեջ նախատեսված է մեխանիկական համուլտոնի, որը տեղադրվել է կոնտակտային օլակների փոխարեն: Գեներատորը թողարկվում է հորիզոնական պաշտպանված կատարումով, թաթերի վրա, երկու առանցքակալային վահաններով: Գեներատորի վենտիլյացիան առանցքային է, արտաձգիչ:

Ներկայում Հայէլեկտրագործարանը յուրացնում է մեխանիկական համուլտոնով  $5-100$  կվտ սինխրոն գեներատորների սերիան, նա արդեն ձեռնամուկ է եղել  $bU-92-6U$ ,  $bU-91-4U$ ,  $bU-83-6U$ ,  $bU-82-4U$  տիպի գեներատորների սերիական թողարկմանը:


(Բնֆորմացիան-տեխնիկական բյուլետեն, ՑՆԻԻԾ, № 3, 1958, Երևան)

## ԵՐԵՎԱՆԻՑ ՆՈՐ ՀՈՒՄՔ ԱՊԱԿՈՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մ. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԵՎ. Կ. ԿՈՍՏԱՆՅԱՆ

Հայկ. ՍՍՌ Ժողովագործության արդյունաբերական միմիայի ինստիտուտ

Երևանիտը այն պրոդուկտներից մեկն է, որը ստացվում է նեֆելինային սիենիտները վերամշակելիս նատրիումի մետասիլիկատի լուծույթի վրա ածխաթթվական դագի ( $\text{CO}_2$ ) ներգործելու միջոցով: Հետևյալ



ուակցիայի հետևանքով ամորֆ սիլիկահողը նստվածք է տալիս սողայի լուծույթում: Ֆիլտրատի չորացումից հետո ստացվում է ամորֆ սիլիկահող, որը խառնված է սողայի հետ տարրեր հարաբերությամբ, նայած սկզբնական պրոդուկտի կոնցենտրացիային և ֆիլտրատի լվացման աստիճանին:

Ստացվող պրոդուկտը, որն իրենից ներկայացնում է ամորֆ սիլիկահողի և սողայի նորբերտական խառնուրդ, կոչվել է երևանիտ: Պատրաստ վիճակում երևանիտը սպիտակ փոշի է, որի մեջ, սպառողի ցանկությամբ,  $\text{SiO}_2$ :  $\text{Na}_2\text{CO}_3$  հարաբերակցությունները կարող են տարրեր լինել:


Ենթադրվում է թողարկել երեք տեսակի երեվանիտ: Երևանիտ-10, երևանիտ-25 և երևանիտ-40, համապատասխանորեն սոդայի՝ 10, 25 և 40% պարունակությամբ:

Դիտելով երևանիտը որպես հումք ապակի եփելու համար, անհրաժեշտ է նշել նրա հետեյալ առանձնահատկությունները:

1. Պրոդրական մարդությունը: Երևանիտի մաքրությունը, ինչպես այդ հետևում է նրա ըստացման տեխնոլոգիայից, կախված է նատրիումի մետասիլիկատի մաքրությունից: Ախտայիլենաքիմիական կոմքինատի նախագծում նախատեսվում է մետասիլիկատի բավական լավ մաքրումը՝ նրա բազմապատիկ վերաբերեղացման միջոցով, որ հնարավորություն կտա ստանալ բացառիկ մաքրության երևանիտ: Երկաթի օքսիդի ( $\text{Fe}_2\text{O}_3$ ) պարունակությամբ երևանիտը գերազանցում է մինչև այժմ ապակեագման համար գործածվող հայտնի ապակեագման համար:

2. Ամորֆ սիլիկահողի և սոդայի բարձր

համասեռությունը: Այդ առնչությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում երևանիտի զերմագրաման: 1 և 2 նկարներում բերված են երեվանիտ-25-ի և ավազի ու սողայի խառնուրդի համեմատական ջերմագրամները: Ավազի ու սողայի խառնուրդը վերցված է 3:1 հարաբերակցությամբ, որը համապատասխանում է սողայի 25%-ի պարունակությամբ խառնուրդում: Ինչպես երևում է, բերված ջերմագրամները տարրերվում են միմյանցից: Երևանիտի ջերմագրամում  $175^{\circ}\text{C}$ -ի դեպքում գոյություն ունի էնդոթերմիկ էֆեկտ, որը համապատասխանում է խոնավության անշատմանը երևանիտից, և, միաժամանակ, բացակայում է սողայի հալման ջերմաստիճանին համապատասխանող էֆեկտը: Դա, ըստ



Նկ. 1


երևութին, խոսում է այն մասին, որ սողայի և սիլիկանողի միջև տեղի ունեցող ռեակցիան նրանց դիսպերսայնության շնորհիվ ընթանում է մինչև վերջ պինդ վիճակում՝ սողայի հալման ջերմաստիճանից ցածր ջերմաստիճաններում:

Երևանիտի վերոհիշյալ առանձնահատկությունները բացառիկ բարեհաջող գործոններ են ապակեական ժամանակ և նարավորություն են տալիս երևանիտը գնահատել տրպես հումք ամենաբազմազան տեսակի՝ տեխնիկական, տնային գործառության ամանեղենի, տարայի, ապակեթելի: և այլ ապակիներ եփելու համար:

Սիլիկատային ջեռուցիչներով լաքորատորական վառարաններում կատարած նախնական փորձերը ցույց են տվել երևանիտով ապակի եփելու որոշ առանձնահատկություններ: Եփվում էր մի ապա-

կի, որն իր բաղադրությամբ մոտ էր ռնորմալ նամակում-կալցիում սիլիկատային ապակուն՝  $\text{NaO} \cdot \text{CaO} \cdot 6\text{SiO}_2$ , որի համար հատուկ երևանիտ էր պատրաստված: Համեմատելու համար, հենց նույն վառարանում միաժամանակ եփվում էր էյուգերեցկի լվացած ապակից, քիմիապես մաքուր սողայից և ածխաթթվական կալցիումից ստացված նույն բաղադրության ապակի: Ածխաթթվական կալցիումը օգտագործվում էր նաև երևանիտով բովածառնուրդում: Ապակիները եփվում էին 200 մլ տարրողությամբ լավ թրծած շամուային տիգելներում:

Բովածառնուրդները տիգելների մեջ լցնելուց և վառարանի մեջ դնելուց հետո, նրա ջերմաստիճանն աստիճանաբար բարձրացվում էր և հսկվում



Նկ. 2

բովածառնուրդի վիզուալությունը: Անհամեշտ է նշել, որ սկզբում երևանիտից զորք բովածառնուրդում տեղի է ունենում տեսանելի փոփոխություն, որը սկսվում է  $500-600^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում: Երևանիտ պարունակող բովածառնուրդում վերջինիս տեսանելի փոփոխությունը կատարվում է  $600-700^{\circ}\text{C}$  ջերմաստիճաններում, սակայն, ջերմաստիճանի հետագա բարձրացման ժամանակ ապակեակույցման և սիլիկատագույցման ուսակցիան այստեղ կատարվում է, ըստ երևութին, ավելի արագ, քանի որ լրիվ եռքը սկզբում դիտվում է երևանիտի բազայի վրա եփված ապակու մոտ: Ապակու պարզեցումը կատարվում էր  $1400^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում, ըստ որում նկատվել է, որ երևանիտ պարունակող ապակու մեջ լրիվ պարզեցումը կատարվում է 45 րոպեում, այնինչ նշված ժամանակամիջոցում ավա-

զով և սողալով նիված ապակու մեջ լրիվ պարզացում դեռ տեղի չէր ունենում:

Համանման փորձեր կատարվել էին նաև կերպություն կատարած մասին լաբորատորական վառարանում: Ապակիները եփվում էին լիտրանոց և կես լիտրանոց շամուտային տիգեներում: Այդ փորձերը հաստատեցին երևանիտի բազայի վրա եփված ապակու արագ պարզեցման մասին ստացված արդյունքները: Դժբախտաբար, մենք հնարավորություն շունենք ստանալ քանակական բնութագիրը պարզեցման և համասեռացման արագությունը որոշելու համար: Սակայն ստացված արդյունքները մեզ հնարավորություն են տալիս ասելու, որ երևանիտի բազայի վրա ապակու եփման ժամանակը դգամուրեն կրճատվում է բովախառնությունի լրիվ եռքի արագության մեծացման, ապակու պարզեցման և համասեռացման շնորհիվ: Մյուս կողմից, անհրաժեշտ է նշել ստացված ապակու բացառիկ թափանցիկությունը, երբ 10—15 սմ հաստության դեպքում ապակին գույնի ու մի երանգ չի ցուցաբերում:

Կերպությունի լաբորատորական վառարանում, երևանիտի բազայի վրա եփվել են ապակու մի քանի տեսակներ՝ կապարի բլուրեղապակի, բո-

րասիլիկատային ապակի, էլեկտրալամպային ապակի և այլն, որոնք աչքի էին ընկնում բացառիկ մաքրությամբ և թափանցիկությամբ: Պետք է նշել, որ տվյալ դեպքում ապակիների ներկման ժիակ աղբյուրը շամուտային պտուտակներն էին, որոնց մեջ  $\text{Fe}_2\text{O}_3$ -ի պարունակությունը համապատասխան էր մինչև 2%-ի: Նկատի ունենալով, որ երևանիտում նատրիումի օքսիդի պարունակությունը համեմատաբար բարձր է, եփվել է հետևյալ բաղադրության կապարի բյուրեղապակի՝  $\text{SiO}_2$  — 67,2,  $\text{RbO}$  — 14,80,  $\text{Na}_2\text{O}$  — 9,5,  $\text{K}_2\text{O}$  — 7,10:


Սուտակա տարիներին երևանիտի արտադրության առնչությամբ, մեր ուսպութիկայում կարենու խնդիր է հանդիսանում տնային գործածության ամանեղեն թողարկող գործարանի կազմակերպումը: Այդ պատճառով արդեն ներկայումս պետք է շանքեր գործադրել երևանիտի բազայի վրա տնային գործածության համար ապակիների նոր բաղադրությունների մշակման համար:

Պետք է նշել, որ Հայաստանի ապակու արդյունքներության մեջ երևանիտը հաջողությամբ կարող է փոխարինել սողային, որը ներմուծվում է Սովետական Միության հեռավոր շրջաններից:

## «ԱՐԱԳԱԾ» ԱՐՈՄԱՏԱՑՎԱԾ ՍԻԳԱՐԵՏՆԵՐ

Հնդարձակելով իր արտադրանքի ասորտիմենտը, Երևանի ծխախոտի ֆաբրիկան ընթացիկ տարվանից թողարկում է «Արագած» առաջին տեսակի արոմատացված սիգարետներ:

Այդ սիգարետների պատրաստման ժամանակ խառնությունը ողջ 100%-ը կազմում են կմախքային ծխախոտները (նրանց 50%-ը, այդ թվում նաև բուղդարականը և շինականը, ներմուծվող տեսակներ են, իսկ 50%-ը՝ հայրենական): Իսկ առաջին տեսակի սովորական խառնությունը օգտագործվում է կմախքային ծխախոտների միայն 80%-ը, իսկ 20%-ը կազմում են թանկարժեք անուշահոտ ծխախոտները: «Արագած» սիգարետներում անուշահոտ ծխախոտների փոխարինումը կմախքայիններով, իշեցնում է տվյալ տեսակի ինքնարժեքը, շագգելով նրա որակի վրա:



Նկ. 1